

Ե Զ Ա Ն Պ Ո Զ Ե Ր Ը.

Արի բարեկամ,
Քեզ մի խրատ տամ...

Դարնան վերջերում մեր գիւղն էր դրախտ,
Ոչ մէկը չ'կար թշուառ և անքաղտ
Ամեն շնչաւոր աղատ էր, ուրախ,
Կեանքի բարիքը վայելում անվախ.
Թէ որ փայլում էր պայծառ արել,
Իջնում էր և ցօղ, շղում անձրել,
Ամեն տեղ կանաչ և ծաղկէ սփոռոց,
Մայիւն, բառաշիւն, դայլայլիկ թոշնոց..
Զուրը կարկաչում, զեփիւռն էր հնչում,
Անտառը շփում, ծառերը շարժվում:
Եւ պյս ամենը իրար խառնուած՝
Քեզ ասում էին «ինչի՞ ես քնած....»

Փայլուն օրերը դեռ չէին անցել,
Եւ բնութիւնը դեռ չէր թառամել.
Որ մի խեղճ եղը գութանավարից
Սաստիկ ձանձրացած ա՞ի քաշեց սրտից.
«Ի՞նչ պարտական ենք պյաքան չարչարուել,
Եւ տարիներով ձեր լուծը քաշել.
Ապերախտ մարդկանց տունը կերակրել,
Վերջը անողորմ լծի տակ սատկել...»
Այս ասաց, չասաց, բուղագոռ տուեց,
Սամի—սամոտէն կոտրեց, փշրտեց, ..
Արիւնն աչքերում՝ ուժը հաւաքած,
Նա տրտինգ արեց սաստիկ կատաղած...»

«Փախա՛ւ... բռնեցէք... գոռաց մաճկալը,
Յետեիցն ընկան ուժեղն ու տկարը..
Մինչեւ երեկոյ խեղճ հոտաղները
Հետքը վերառած՝ ընկան սարերը,
Ական արեցին ոչխար — տաւարը,
Ապա յետ գարձան՝ ասին խաբարը,
Ուստա մաճկալը պյդ վերաբերեց
«Երանց» ծուլութեան ու մի լաւ «ծեծեց...»

Յետոյ նա հասաւ տէրտէրի դռւռը,
Որ գայլկապ անի ձորի էն կռւռը...

Ըատ վաղեց թէ քիչ՝ ոչ ով չիմացաւ,
Սակայն՝ մեր եղը լաւ տեղ դինջացաւ,
Աջ կողմից վծիտ առուն էր օաչում,
Զախ կողմից աղբիւր կարկաչում, վազում.
Եւ ամեն կողմից կանաչ ծնկնահար,
Պատած էր անտառ, օդը խիստ պայծառ,
Հենց այդ դրախտում մեր եղը կանգնեց,
Աջ ու ձախ նայեց, սիրտը զմայլեց.
«Աչա մեր տեղը, մեր նախնեաց վայրը,
Ուր ծնել է մեզ մեր աշու մայրը..»
Մարդիկ չգիտե՞ն, որ մենք էլ ցեղ ենք,
«պատմական» անուն և ծագում ունենք...
Աչա այստեղ է մեր յիշատակը,
Այստեղ փայլումէ մեր դրոշակը...
Սարի զաւակին ի՞նչ իրաւունքով
Անգութ մարդիկը անում են խորով.. .
Ազատ էր հողը, ազատ և լեզուն,
Հենց ինչպէս ուզեց, խօսեց եռանդուն.
Ապա թէ սկսեց բերանը ածել,
Աստծու պարզեից կուշտ կուշտ արածել . . .

Դիտէք, ընթերցող, որ այս միջոցին,
Այս եղանակի քաղջը ընթացքին,
Գող ու աւազակ պարապ չեն մնում,
Սար ու ձոր ընկած որս են պտրտում:
Հենց այն միջոցին երբ եղը լոեց,
«Տառերի տակից մի թուրք դուրս արեց,
Տեսաւ եղանը՝ կամաց փնթփնթաց—
«Այսօր ինձ լաւ որս հասցրեց Ռոտուած».

Մի փոքր առաջ քայլեց սև թուրքը,
Մէջքից վէր դրեց անձոռնի քուրքը:
«Այս սարի հայվան, հեռուից խօսաց,
Ինչի՞ դու այդպէս լղար ես, մաշուած»:
—Ինչի՞ ես հարցնում, ցաւերս նորում,
Գնա՝ բանիդ կաց, թող հանգիստ առնում...»

Ասա՛, եթէ ոչ՝ տեսնո՞ւմ ես սուրս,
 Կաշիդ կը մաշկեմ, հաւաքեմ բռւռս։
 —Ես քո սրիցը այժմ չեմ վախի,
 Միայն քեզ կասեմ պատճառը ցաւի։
 Սարի կանաչը շատ եմ արածել,
 Ենդուր էլ էսպէս լղար եմ մնացել...
 «Սարի կանաչը ուժ—զօրութիւն է,
 Դրուստ ասա, լսեմ, չաղ միսդ ո՞ւր է»։
 —Մի կարծիր թէ ես ընկած եմ ուժից,
 Իմ մկնակները պինդ են պողպատից։
 Պատճառ՝ իմ կեանքը ես անց եմ կացրել,
 Ծանր լծի տակ, միշտ բեռը կրել...
 Իմ չաղութիւնը, եղբայր պատուական,
 Ծախեցի . . . ւշտ ընկօրս վրան։
 Եւ ես ստացայ աւելի լաւ բան—
 Այս սուր պողերը, որ գլխիս չէ կան...
 «Անխելք ես եղել, յիմար անասուն,
 Ի՞նչ բան է պողը, որ գնել ես դուն։
 —Յիմարը դու ես, իսուց մեր եղը,
 Որ չես իմանում՝ ի՞նչ բան է պողը ..
 «Դէ ձենդ կարի, անձոռնի հայվան,
 Հենց այս բոպէում վէր կ'ընկնես անջան...
 Բայց չէ . . . արի քեզ գողանամ, տանեմ,
 Մսավաճառի վրա կը ծախեմ։
 Միթէ չգիտես, որ ո՞չ թէ պողը,
 Այլ ինձ պէտք էր քո համեղ միսը . . .

Թուրքը շատ վատահ մօտեցաւ եղին?
 Էսկոյն իմացաւ հունարը պողին։
 Եւ երբոր թուրքի սուրը պլպլաց,
 Եղը վրա վազեց՝ տուեց մի հարուած,
 Թուրքի թափանը պատուց, պատուեց,
 Ապա ականջին ընկաւ ու ասեց.
 «Տեսա՞ր. ի՞նչ բան են սուր սուր պողերը,
 Թող այժմ քեզ լափեն վայրի խողերը . . .

Այսպէս, բարեկամ, ոչ գող, ոչ գաղան
 Էլ չկարացին վնասել եղան.

Քանի կեանք ունէր, նա ազատ ազբեց,
 Սռոր պողը նորան այդ օրին հասցրեց.
 Բայց թէ եզր զուրկ լինէր պողերից,
 Որոնցով փրկեց իւր կեանքը մաշից.
 Ո՞քան կը տանջուէր ծանր լծի տակ,
 Եւ կամ կ'լինէր թուրքից շան—սատակ.

Ա. Վ. Ի. Ք. Ա. Ր. Ո. Ա. Ռ. Ե. Ա. Հ. Յ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Ամսոյս 4 ին յետ կէսաւուր ժամը $6\frac{1}{2}$ ին ժամանեց ի Մայր Աթոռս Խստարաբիոյ եւ նոր—Նախիթեւանի թեմի Վ. ինակաւոր Առաջնորդ Գերապատիւ Մակար Արքեպիսկոպոսը։ Նորին Բարձր Սրբազնութեան ընդունելութիւնը թէ Էֆմիածնի Միաբանութեան, թէ տեղական Ոստիկանութեան եւ թէ Վ. աղարշապատի ժողովրդեան կողմից կատարուեցաւ արժանավայելուչ հանդիսիւ։

Մինչեւ Երեւան Միաբանութեան կողմից ընդառաջել էին Նորին Բարձր Սրբազնութեանը Անդամք Անօդի—Գերապատիւ Մեսրովը եւ Ներսէս Եպիսկոպոսներն ու բարեշնորչ Սարգիս եւ Ղետնդ Վ. արդապետները։ Նորին Բարձր Սրբազնութեանն սպասումէին Երեւանում նմանապէս Վ. աղարշապատի Պ. Գաւառապետի Օգնականը մի խումք սպաթիկաններով եւ Վ. աղարշապատի գիւղապետ պ. Գեղամեանցը բազմաթիւ ձիւոր երիտասարդներով։ Իսկ գիւղի հասարակութիւնը մեծ ու փոքր ծածկել էին ամբողջ Հրապարակն ու փողոցը, որի միջով պէտք է անցնէր Նորին Բարձր Սրբազնութեան կառքը։ Միաբանութեան Ռւխտը եւ ձեմարանի Տեսուչն ու Աւսուցչաց խումքը Նորին Բարձր Սրբազնութեանն ընդունեցին Էֆմիածնի արտարին պարսպի հիւմիսային մեծ դրանառաջ. իսկ ձեմարանի ուսանողք եւ աշակերտք ներքին պարսպի արեւմուեան մեծ գոնից մինչեւ Տաճարի դուռը երկերգ շարուած երգումէին քաղցրաձայն։ Նորին Բարձր Սրբազնութիւնը Միաբանակոն Ռւխտի հիւտի միասին անցնելով